Ամսական տեղեկագիր
ՀՈԿՏԵՄԲԵՐ | 2024

ԶԱՐԳԱՑՆԵԼՈՎ ՏԱԹԵՎԻ ՀԱՄԱՅՆՔԸ. ԳՅՈՒՂԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՆՈՐ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ

Պատկերացրեք, որ դուք այցելել եք Տաթև՝ տեսնելու Հայաստանում չորրորդ դարից գործող հոգևոր, մշակութային, գիտական նշանավոր կենտրոններից մեկը՝ Տաթևի միջնադարյան վանքը և ճամփորդելու Գինեսի ռեկորդների գրքում գրանցված «Տաթևեր» ճոպանուղով: Ձեր ճամփորդության ժամանակ դուք մեծ հավանականությամբ հանդիպելու եք տաթևցի կանանց, ովքեր վանքի հարևանությամբ վաղ առավոտից առևտուր են անում՝ զբոսաշրջիկներին առաջակելով լայն տեսականի՝ սարերի մաքուր մեղրից մինչև էկոլոգիապես մաքուր բաղադրիչներից պատրաստված ավանդական ուտեստներ ու ըմպելիքներ:

Տաթևցի կանայք ամեն առավոտ 6-7 կմ ոտքով անցնում են իրենց գյուղի մոտակա սարերով՝ որպեսզի հավաքեն այնտեղ աճող տարատեսակ արժեքավոր բուրավետ խոտերը, փնջեն և տուրիստներին առաջարկեն՝ զիվան (Cephalaria)՝ հազի ու երիկամների հիվանդության, սրոհունդը (Hypericum) ՝ անքնության, արյան շրջանառության, նանան (Mentha Piperita L.)՝ մարսողության, ուրցը (Thýmus)՝ ճնշումը կարգավորելու ու էլի տասնյակ խոտաբույսեր՝ ամենատարբեր հիվանդություններից բուժվելու համար:

«Մենք ենք մեր սարերը» որոշել է խրախուսել տաթևցի կանանց՝ նրանց համար (և ոչ միայն) ստեղծելով նոր հարմարավետ պայմաններ:

Մենք ուրախ ենք հայտարարել Տաթևում գյուղական շուկայի ստեղծման մեր նոր նախագծի մասին:

Գյուղական շուկան ոչ միայն կառաջարկի թարմ ապրանքներ, հուշանվերներ և ձեռագործ իրեր, այլ նաև կծառայի որպես համայնքային միջոցառումների տարածք՝ ընդլայնելով կապը տեղացիների և զբոսաշրջիկների միջև:

Արցախից տեղահանված անհատները հնարավորություն կունենան կիսվել իրենց խոհարարական ժառանգության ավանդական բաղադրատոմսերից պատրաստված ուտեստներով՝ խթանելով տնտեսական բարեկեցությունն ու միասնությունը:

Միացե՛ք մեր նախաձեռնությանը և իրականություն դարձրեք այս երազանքը: Իմացեք ավելին ծրագրի մասին այստեղ և մտածեք մեր նախաձեռնությանն աջակցելու մասին:

ԱՋԱԿՑԵԼ

Տաթևի շուկան կօգնի իրացնել նաև այստեղ աճող հազարավոր պտղատու ծառերի բերքը և դրանից ստացված մթերքները: «Մենք ենք մեր սարերը» նաև կհոգա, որպեսզի տաթևցիները, և հատկապես երիտասարդները ավելի հմտանան այգեգործության, գյուղատնտեսության ու ձեռնարկատիրության մեջ, որպեսզի հզորացնեն իրենց համայնքը:

ՏԱԹԵՎԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ Ռուբեն Վարդանյանի սկսած ոգեշնչող ծրագիրն է: Եկեք միասին իրագործենք այս նախաձեռնությունը հիմա, երբ Ռուբենը շարունակում է ապօրինաբար պահվել ադրբեջանական բանտում:

ՎԵՐՋԻՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՈՒԲԵՆԻ ԵՎ ՄՅՈՒՍ ՀԱՅ ԳԵՐԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- Ռուբեն Վարդանյանը և մյուս հայ գերիները անարդարացիորեն մնում են ադրբեջանական բանտում: Բաքվի դատարանը երրորդ անգամ երկարացրել է նրանց կալանքի ժամկետը:.

  Իմացեք ավելին

Միավորենք մեր ջանքերը հանուն արդարության, որպեսզի ապահովենք նրանց անվտանգ վերադարձը տուն:

Վերջին զարգացումները ընդգծում են Ադրբեջանի կառավարության վրա միջազգային ճնշման կարևորությունը:

- ***Տարածաշրջանի վրաազդեցություն ունեցող երկրները պետք է ավելացնեն ճնշումն Ադրբեջանի վրա. Դավիթ Վարդանյան.*** *Իմացեք ավելին*
- ***Ex-Karabakh official held by Azerbaijan claims torture, lack of speedy trial.*** *Իմացեք ավելին*

Շնորհակալություն, որ Ռուբենի և մեր կազմակերպության կողքին եք

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք դիմել
info@ourmountains.am

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ